13/II 1968 г. операция Крайля с перевязкой наружной сонной артерии слева. Внутриартериальная инфузия в левую язычную артерию (100 мг тию-тефа и сарколизина). Явления сильной саливации, которые имели место у больного за последние 2—3 месяца, купированы инъекциями атропина. От предложенной операции резекции языка больной отказался. Выписан с заметным улучшением. Через год ухудшения не обнаружено.

Больной К., 63 лет, поступил 13/V 1969 г., выписан 13/VII 1969 г. с улучшением. Диагноз: рак языка III—IV стадии.

Поражен почти весь язык от корня до кончика опухолевым процессом с поражением регионарных лимфоузлов. Произведена операция Крайля 29/V 1969 г. с канюлированием язычной артерии II/VI 1969 г.

В течение 12 дней получил 23 г 5-фторурацила. При выписке участки некротической ткани, подозреваемые на рак. Химиотерапией иноперабельный рак языка был переведен в операбельное состояние. От предложенной операции удаления языка больной отказался.

13/VII 1969 г. выписан с улучшением. Через 3 месяца в связи с прогрессивным ухудшением состояния больной скончался.

Больной С., 62 лет, поступил 24/XI 1969 г. с диагнозом: рак языка III стадии.

Изъязвление языка в области задней и правой боковой поверхности. Резкое ограничение подвижности языка. Регионарные лимфоузлы увеличены, плотны, малоподвижны.

16/XII 1969 г. операция удаления подчелюстных и подбородочных лимфоузлов справа. Дренажное справа язычной артерии, через которую введено всего 250 мл тию-тефа, в результате чего опухоль резко уменьшилась и подвижность языка заметно восстановилась.



Проверка через 3 месяца установила: язык сморщен, раковая язва замещена рубцом, подвижность языка свободная.

Больной У., 30 лет, поступил 6/IV 1970 г. Диагноз: рак языка II стадии. На левой половине языка, ближе к задней поверхности, определяется опухоль диаметром 2,5 см, выступающая над поверхностью языка на 1 см. Поверхность опухоли шероховатая, местами покрыта кратерообразными углублениями, консистенция плотная, имеет четкие контуры (рис. 3).



Рис. 3. Рак языка IIIa ст. Больной У., до операции.

Подчелюстные и подбородочные лимфоузлы умеренно увеличены, подвижны, безболезненны. Язык обложен белым налетом, подвижность свободная, болезненности не обнаруживает.

15/IV 1970 г. внутриартериальная регионарная инфузия—перевязка наружной сонной артерии выше щитовидной артерии.

С 13 по 20/IV в сосуд введено всего 150 мг тио-тефа и 1 000 000 ед. пенициллина. 5/V 1970 г. операция—резекция языка с опухолью (в пределах здоровых тканей). Состояние больного удовлетворительное. 12/VI 1970 г. выписан в здоровом состоянии.

Анализируемый материал дает нам основание сделать следующие выводы.

1. Внутриартериальная регионарная химиотерапия в ряде случаев переводит иноперабельный рак в операбельную стадию, что является одним из весьма важных преимуществ метода.

2. Введение через полиэтиленовую трубку, помимо противоопухолевых химиопрепаратов, также и обезболивающих средств, антибиотиков и т. д. дает возможность облегчить нередко испытываемые больными сильнейшие болевые ощущения.

3. Приводит к прекращению саливации, что в значительной мере способствует улучшению самочувствия.

4. Наблюдается полное отсутствие осложнений, связанных с методикой лечения.



Ս. Ս. ԱԹԱՆԱՅԱՆ, Մ. Խ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ե. Ա. ԽՉԱՐՉՅԱՆ

ԳԼԽԻ ԵՎ ՊԱՐԱՆՈՑԻ ԶԱՐՈՐԱԿ ՈՒՌՈՒՑՔՆԵՐԻ ՆԵՐՋԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ  
ՌԵԳԻՈՆԱՐ ՔԻՄԻՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՂԸ

Ա մ փ ո փ ու մ

Հեղինակները 22 կլինիկական դիտարկումների հիման վրա ցույց են տվել գլխի և պարանոցի շարորակ ուռուցքների ներզարկերակային ռեգիոնար քիմիոթերապիայի եղանակի առավելությունը բուժման մյուս եղանակների նկատմամբ: Ներզարկերակային ռեգիոնար ինֆուզիայի ժամանակ ուռուցքային հյուսվածքում և նրա շուրջը քիմիոթերապիայի առավել մեծ կոնցենտրացիա է ստեղծվում, քան ներերակային ներարկումների ժամանակ:

Վերահիշյալ մեթոդի կիրառումը հնարավորություն է ստեղծում բարձր-թող հիվանդությունների բուժման ժամանակ կիրառել նաև վիրաբուժական միջամտություն:

Л И Т Е Р А Т У Р А

1. Блохин Н. Н., Островерхов Г. Е., Трапезников Н. Н., Гаспарян С. А. В кн.: Регионарная химиотерапия злокачественных опухолей. М., 1967, стр. 26.
2. Бронштейн Б. Л., Ходжаев В. Г. Вопросы онкологии, 1969, 10, 9, стр. 8.
3. Гаспарян С. А., Есенкулов А. Е., Тарасов Г. В. В кн.: Регионарная химиотерапия злокачественных опухолей. М., 1967, стр. 285.
4. Геворкян И. Х. Внутриагтериальное применение лекарственных веществ в хирургии. М., 1958.
5. Казанский Д. А. Вопросы онкологии, 1965, XI, 3, стр. 42.
6. Островерхов Г. Е., Гаспарян С. А. В кн.: Вопросы экспериментальной хирургии и морфологии. М., 1965, стр. 129.
7. Пачеес А. И., Аверьянов Ю. А., Аббасов А. Т., Гаспарян С. А., Поляков Б. И., Титлевская В. В., Шенталь В. В. В кн.: Регионарная химиотерапия злокачественных опухолей. М., 1967, стр. 247.
8. Трапезников Н. Н., Яворский В. В. Регионарная химиотерапия злокачественных опухолей человека. М., 1964.
9. Dargent M, Colon Y. La semaine des hopitaux de Paris, 1964, 40, 8/2, 147, 489.
10. Nuhum A. M., Rochlin D. B. Am. Y. Surg., 1963, 105, 6, 759.
11. Smith J. L., Stehlin J. V., Clark R. H. Труды VIII Международного противоракового конгресса. М., 1963, 6, стр. 237.
12. Sullivan R. D. Y. Clinworth. Amer., 1962, 42, стр. 365.
13. Woodhall B. Results of perfusion neural tumors-cancer chemotherapy. Rep., 1960, 10, 93.



Մ. Պ ՇԱՏԱԽՅԱՆ

ԱՂԻՔՆԵՐԻ ՍՈՒՐ ԱՆԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՎԻՐԱՀԱՏՎԱԾ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ  
ՀՆՈՒՄԱԿՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեղինակը գտնում է, որ ԱՍԱ-ի օպերատիվ բուժման հեռավոր արդյունքներն այնքան էլ մխիթարական չեն:

Առաջին և երկրորդ խմբին պատկանող անձնավորությունների թիվը հնարավոր է ավելացնել, եթե մենք այս հիվանդության ժամանակ կիրառենք անհատականության սկզբունքը և ժամանակին գործադրենք բուժման կոմպլեքս միջոցառումներ:

Աղիքների սուր անանցանելիության տարբեր բնագավառների վերաբերյալ (պատճառախոսություն, ախտածնություն, կլինիկո-ախտորոշում, բուժում և այլն) ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում կան բազմաթիվ ու բազմակողմանի ուսումնասիրություններ: Սակայն այս լայնածավալ գրականության կողքին, աղիքների սուր անանցանելիությունից (ԱՍԱ) վիրահատվածների հեռավոր արդյունքների մասին կան միայն հատ ու կենտ աշխատություններ: Ավելին, եղած գրականության զգալի մասը նվիրված է դիպլածաբանական նկարագրություններին [11, 18 և ուրիշներ], իսկ որոշ հեղինակների կողմից [14, 15, 1, 6 և ուրիշներ] կատարված հետազոտությունները վերաբերում են ԱՍԱ-ի առանձին ձևերին և նրանց միակերպ վիրահատություններին: Նման վերլուծությունները լինելով միակողմանի, լրիվ պատկերացում չեն տալիս իրենու հիվանդության բազմաթիվ ախտահարումների ժամանակ վիրահատական միջամտության հեռավոր արդյունքների մասին: Բնականաբար, ավելի հավանական և համոզիչ պետք է համարել այն աշխատությունները, որոնք ընդգրկում են իրենու հիվանդության բոլոր ձևերը և նրանց ժամանակ կատարված օպերատիվ միջամտությունների բոլոր տարատեսակները: Այս առումով լավագույնը պետք է համարել Վ. Մ. Մինցի [7], Վ. Ի. Միրոնովայի [8], Ե. Ա. Նեկրասովայի [9], Ի. Բ. Օլեշկևիչի [10], Ֆ. Զ. Զեյտելի [3], Մ. Վ. Յակովլևի [17] և այլոց՝ իրենու ժամանակ վիրաբուժական միջամտության հեռավոր արդյունքների վերաբերյալ կլինիկական նյութի վերլուծությունները:

Գործնական խոշոր նշանակություն ունեցող այս հարցի քննարկումը (Վ. Ե. Իստոմինի [4] ղեկուցման շուրջ) առաջին անգամ տեղի ունեցավ 1937 թ. ուկրաինական վիրաբույժների 7-րդ համագումարում: Այնուհետև Ն. Վ. Զավոդովսկին (1964 թ.) 12 հեղինակների աշխատություններից հավաքագրելով 2344 դեպք, հանգեց այն եզրակացության, որ շնայած աղիքների սուր անանցանելիության օպերատիվ բուժման լավագույն արդյունքներին, որի հետևանքով մահացության տոկոսը վերջին 30 տարվա ընթացքում իջել է 3—4 անգամ, հեռավոր արդյունքների ցուցանիշներում դեռևս առանձին փո-



փոխություններ չեն դիտվում, դրանք համազոր են 30 տարի առաջ եղած թվական տվյալներին: Վ. Ե. Իստոմինի [4], Կ. Յա. Կենիգսբերգի [5] և այլոց աշխատություններից պարզվում է, որ ԱՍԱ-ից վիրահատված հիվանդների մոտ մահացությունը տոկոսը վերջին 30 տարվա ընթացքում իջել է 3—4 անգամ, մինչդեռ ԱՍԱ-ից վիրահատվածների հեռավոր արդյունքների բավարար և վատ ցուցանիշները այսօր էլ գտնվում են բարձր թվերի սահմաններում. այն հասնում է 37—40%-ի: Այդպիսի տվյալներ բերվում են նաև այլ հեղինակների կողմից [12, 6, 13, 17, 15]: Սրանց մոտ ԱՍԱ-ից վիրահատված հեռավոր վատ արդյունքներով հիվանդների թիվը հասնում է 23—28%-ի:

Իլեուս հիվանդության վիրահատումներից առաջացած հեռավոր վատ արդյունքների այսքան բարձր հաճախականության պատճառները բազմազան են: Ոմանք այն վերագրում են հետվիրահատական շրջանի կպումագոյացություններին [4, 5, 16 և ուրիշներ], ոմանք [2, 6 և ուրիշներ]՝ ծանր վիրահատումներին (աղիքների լայնածավալ բացահայտումներ, զանազան տիպի անաստամոզներ, կրկնակի վիրահատումներ և այլն): Ոմանք էլ հեռավոր վատ արդյունքների պատճառները վերագրում են դեզինվազիացիաներին) առանց ապենդիկտոմիայի և հաստ աղու վերելակ ճյուղի ֆիքսման), սիզմայաձև աղու զանազան տիպի ֆիքսումներին (Բրոուն-Ռու, Հազեն-Տորն), կպումահատումներին և այլն:

Հետվիրահատական շրջանում աղիքների ֆունկցիոնալ կարողությունների անբավարարության պատճառ են համարվում նաև ուշացած հոսպիտալացումը և ուշացած վիրահատումները: Նման դեպքերում նույնիսկ «արտավիատիկ» վիրահատությունները շատ ծանր են անդրադառնում հիվանդների առողջության վրա: Կենդանի մնացած հիվանդներից շատերի մոտ հետվիրահատական շրջանում առաջանում են իլեուսի կրկնություններ:

Բազմաթիվ կլինիկական նյութի ուսումնասիրություններից պարզվել է, որ վիրահատված հիվանդների մեծամասնության մոտ, անկախ վիրահատության տեսակից (ամոքիչ, արմատական), հետվիրահատական շրջանում այս կամ այն չափով խախտվում է աղիքների նորմալ գործունեությունը: Նման հիվանդների մոտ այն կլինիկորեն արտահայտվում է տարբեր աստիճանի հասնող դիսպեպտիկ երևույթներով, սկսած պարբերական փորկապությունից, վերջացրած աղիքների լրիվ անցկալումների սիմպտոմոկոմպլեքսով:

ԱՍԱ-ից վիրահատված հիվանդների հեռավոր արդյունքների ուսումնասիրությունը ներկայումս համարվում է կարևոր հարցերից մեկը այն իմաստով, որ այն հնարավորություն է տալիս մի կողմից հետևելու և ի հայտ բերելու այս կամ այն վիրաբուժական միջամտության արդյունավետությունը, մյուս կողմից՝ նման հետազոտությանը մենք ի վիճակի ենք լինում հետվիրահատական շրջանում որոշել հիվանդի աշխատունակությունը: Բացի այդ, հեռավոր արդյունքների ուսումնասիրությունները վիրաբույժին կողմնորոշում են ճիշտ ընտրելու վիրահատության տեսակը, որպեսզի չլինեն, կամ քիչ լինեն հիվանդության կրկնություններ ու կրկնակի վիրահատումներ:

Հաշվի առնելով այս հարցի կարևորությունը և խոշոր գործնական նշանակությունը, մենք նպատակահարմար գտանք հրապարակել նաև մեր հետազոտությունների արդյունքները: Հետազոտության տակ է եղել 112 հիվանդ: Նրանցից 8-ը կրկնակի քննվել են ստացիոնար-պոլիկլինիկայի ճանապարհով: Մնացած 104 հիվանդների հետազոտման արդյունքներն ուսումնա-



սիրվել են հարցաթերթիկների միջոցով: Նշված 112 հիվանդների ուսումնասիրության հեռավոր արդյունքներն ընդգրկում են շուրջ 16 տարի (1954—1969 թթ.): Նրանք ըստ սեռի և տարիքի ներկայացնում են հետևյալ պատկերը. արական սեռին պատկանում է 46, իգական սեռին՝ 66 հիվանդ: Մինչև 10 տարեկան եղել է 19, 60-ից անց՝ 6 հիվանդ:

Այս 112 հիվանդների ամենահեռավոր շրջանին վերաբերող հետազոտությունների արդյունքներն ունեն 16 տարվա, ամենամոտ շրջանին՝ մեկ տարվա վաղեմություն:

Աղիքների սուր անանցանելության պատճառով այդ հիվանդների մոտ կատարվել են հետևյալ տիպի վիրահատումներ. էնտերոստոմիա՝ 1 դեպք, աղիքների ապառոտումներ (դետորսիա)՝ 6, հանգուցազերծում՝ 3, ռեզեկցիա՝ 19, դեզինվազինացիա՝ 33, կպումահատումներ՝ 19, շրջանացող անաստամոզներ՝ 4, Նոբելի վիրահատում (1960 թ. կլինիկայի վերափոխմամբ)՝ 27 դեպք: Ընդամենը եղել է 112 դեպք:

Ելնելով առողջության և աշխատունակության վիճակից, այս 112 հիվանդներին ստորաբաժանել ենք երեք խմբի. Ա՝ լավ, Բ՝ բավարար, Գ՝ վատ: Ա խումբ համարել ենք այն անձնավորություններին, որոնք առողջ են և զբաղվում են իրենց մասնագիտությամբ: Բ խմբին պատկանում են այն անձնավորությունները, որոնք մերթնդմերթ ունենում են դիսպեպտիկ երևույթներ՝ լույծ, փորկապություն, գաղերի կուտակում, որովայնում ծանրության զգացում և այլն: Սրանցից ոմանք փոխել են իրենց աշխատանքի բնույթը: Ոմանք իրենց տկարության պատճառով ժամանակ առ ժամանակ բացակայում են աշխատանքից: Բուժվում են տնային պայմաններում, երբեմն դիմում են պոլիկլինիկայի կամ շրջանային բժիշկների միջամտությանը: Գ խմբում այն հիվանդներն են, որոնց մոտ հաճախ կրկնվում են դիսպեպտիկ երևույթները: Վերջիններս երբեմն ընթանում են իլեուսին հատուկ սիմպտոմոպեքսով: Այս խմբի մեջ են մտնում կրկնակի վիրահատվածները, հետվիրահատական ճողվածքով տառապողները և այն հիվանդները, որոնք աշխատունակ չեն և համարվում են 3-րդ կամ 2-րդ խմբի հաշմանդամ:

Մեր հետազոտած 112 հիվանդներից 77-ը պատկանել են Ա խմբին, 26-ը՝ Բ, 9-ը՝ Գ խմբին (աղյուսակ 1):

Ըստ խմբավորումների և կատարած վիրահատության ձևերի, մեր այս 112 վիրահատված հիվանդների մոտ հեռավոր արդյունքները տվել են հետևյալ ցուցանիշները. աղիքների օբստրուցիոն անանցանելությամբ (առկարիդոզ) տառապող մեկ հիվանդի մոտ 1954 թ. կատարվել է էնտերոստոմիա և առ այսօր (1969 թ.) իրեն համարում է առողջ, աշխատում է իր մասնագիտությամբ (փականագործ): Աղիքների ապառոտում (դետորսիա) կատարվել է 6 դեպքերում, որից երկուսը համարվում են 2-րդ, իսկ մեկը (կրկնակի վիրահատվել է՝ սիզմայաձև աղիքի ռեզեկցիա) 3-րդ կարգի հաշմանդամ: Մյուս երեքը առողջ են: Աղիքների ռեզեկցիա կատարվել է 19 հիվանդների մոտ, որոնցից 8-ը պատկանում են Ա, 7-ը՝ Բ և 4-ը՝ Գ խմբին: Երեսուներեք հիվանդների մոտ կատարվել է դեզինվազինացիա, նրանցից 32-ը պատկանում են Ա, մեկը՝ Բ խմբին: Աղիքների կպումահատումներ կատարվել են 19 հիվանդների մոտ, որոնցից 3-ը պատկանում են Ա խմբին, 12-ը՝ Բ և 4-ը՝ Գ խմբին: Աղիքների շրջանցող անաստամոզով դուրս գրված հիվանդներից միայն մեկն է



Աղյուսակ 1

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԻՅՈՒՑՔՆԵՐՆ ԸՍՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԻՐԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ  
ԵԼՔԻ

Աղիքների սուր անանցանելիության տեսակները և կատարված վիրահատությունները	վիրահատությունների թիվը	Ելք					
		Ա. խումբ առողջ են և աշխատում են իրենց մասնագիտություններում	Բ. խումբ երբմիջ օրենքներով են փոքրագույն թվում, լուրջ, գաղեր կուտակում, որովայնի ծանրություն գրանցվում	Գ. խումբ հաճախ կրկնվող զիսպիպտիկ երևույթներ, աղիքների անանցանելիություն, պատվարային, հետվիրահատական ծանր վաթման, կրկնապիպտիկ			
1. Աղիքների խցանում ասկարիդներից՝ էնտերոստոմիա	1	1					
2. Սիրմալաձև աղիքների ոլորումները ա) դետորսիա բ) ռեզեկցիա	1 3	1 2		1			
3. Բարակ աղիքների ոլորումներ ա) դեկորսիա բ) ռեզեկցիա և մեկկելյան դիվերտիկուլի հեռացում	5 7	2 4	2			1	
4. Աղիքների հանգուցավորումներ ա) հանգուցադիրժում (կպումահատմամբ, ապենդեկտոմիայով) բ) ռեզեկցիա	3 2	2		1 1			1
5. Աղիքների ներքուսկումներ ա) դեզինվազինացիա ապենդեկտոմիա, «ցեկում»-ի ֆիքսում բարակ և հաստ աղիքների բ) դեզինվազինացիա գ) ինդոցեկալ անկյան ռեզեկցիա	29 4 2	29 3		1 2			
6. Աղիքների կպումային անանցանելիություն ա) կպումահատում բ) Նոբլի օպերացիա գ) ռեզեկցիա դ) շրջանցող անաստամոզ	19 27 5 4	3 25 2 3	12 2 1 1			4 2	
Ընդամենը	112	77	26 (35 կամ 31,25 %)			9	

պատկանում Գ խմբին, մնացած երեքն առողջ են և աշխատում են իրենց մասնագիտություններում:

Նոբլի վիրահատության (պրոֆ. Ի. Խ. Գևորգյանի ձևափոխությամբ) ենթարկված 27 հիվանդներից 25-ը պատկանում են Ա, երկուսը՝ Բ խմբին: Այսպիսով, մեր 112 հիվանդներից Ա խմբին պատկանում է 77 հոգի (68,8%), Բ խմբին՝ 26 (23,2%) և Գ խմբին՝ 9 հոգի (8,0%): Այս տվյալները չեն համապատասխանում Գ. Պ. Կոկորինի, Մ. Վ. Յակովլևի և ուրիշների հետազոտության արդյունքներին: Սրանց մոտ վատ, կամ Յ-րդ խմբի ցուցանիշները հասնում են 23—28%-ի: Մեր տվյալներով այն կազմում 8%: Ինչ վերաբերում է հեռավոր լավ և բավարար արդյունքներին, այն մեր հետազոտություններում կազմում է 92%: Այս հանգամանքը մենք վերագրում ենք արդի բուժման



կոմպլեքս միջոցառումներին, հիվանդների վաղաժամ հոսպիտալացմանը և վաղաժամ վիրահատումներին: Հեռավոր արդյունքների (բավարար և լավ) բարձր ցուցանիշները մենք վերագրում ենք նաև կատարված վիրահատումների առանձին տեսակներին և նրանց առավել հաճախ լինելուն: Այսպես, օրինակ, իլեոցեկալ անկյան դեզինվազինացիան (ապենդեկտոմիայով և «ցեկում»-ի ֆիքսումով). մեր վիրահատած 29 հիվանդները հետվիրահատական շրջանում բոլորն էլ ընդգրկվել են Ա խմբում: Աղիքների կպումային անանցանելիությունների ժամանակ Նոբելի վիրահատության ենթարկված 27 դեպքերից 25-ը վերաբերում է Ա խմբին: Ինչ վերաբերում է մեր կողմից կատարված վիրահատությունների (աղիքների դետորսիա, կպումահատումներ, աղիքների զանազան տիպի ֆիքսումներ և այլն) հեռավոր արդյունքներին, ապա դրանք իրենց հաճախականությամբ համընկնում են նշված հեղինակների թվական տվյալներին: Մեր կարծիքով, տիպական այս վիրահատությունների խիստ անհատականացումը իր լավագույն ազդեցությունը կունենա հեռավոր լավ և բավարար արդյունքների բարձր թվական ցուցանիշներ ստանալու հարցում:

Նզրակացություններ.

1. Օպերատիվ բուժման հեռավոր արդյունքները դեռևս անբավարար են: Դրա բարելավումը սերտորեն կապված է այս հիվանդության վաղաժամ ախտորոշման և վաղաժամ օպերատիվ միջամտությունների հետ:

2. Աղիքների զանազան տիպի ֆիքսումներից և կպումահատումներից առաջացած կրկնակի վիրահատությունները բավականին հաճախ են և վատացնում են հեռավոր արդյունքների ցուցանիշները: Այն մեր տվյալներով հասնում է 14,3%-ի:

3. Իլեոցեկալ անկյան ներբուժակումների ժամանակ դեզինվազինացիային զուգընթաց անպայմանորեն պետք է կատարել ապենդեկտոմիա և վերելակ հաստ աղիքի ֆիքսում, որը դեպքերի ճնշող մեծամասնության մոտ տալիս է հեռավոր լավ արդյունքների երաշխիք:

4. Ամոքիչ վիրահատություններին (շրջանցող անաստամոզ, էնտերոստոմիա, աղիքների ֆիքսացիա և այլն) պետք է դիմել միայն բացառիկ դեպքերում:

5. Աղիքների կպումային անանցանելիության դեմ պայքարի լավագույն միջոցը պետք է համարել Նոբելի վիրահատությունը: Այն մեր 27 դեպքերից 25-ի մոտ հետվիրահատական շրջանում տվել է հեռավոր լավ արդյունքներ:

Հոսպիտալ-վիրաբուժության  
կենտրոն

Ստացված է 24/VI—1972 թ.



М. П. ШАТАХЯН

# ОБ ОТДАЛЕННЫХ РЕЗУЛЬТАТАХ У БОЛЬНЫХ, ОПЕРИРОВАННЫХ ПО ПОВОДУ ОСТРОЙ КИШЕЧНОЙ НЕПРОХОДИМОСТИ

## Р е з ю м е

За период с 1954 по 1969 г. мы исследовали отдаленные результаты у 112 больных, оперированных по поводу острой кишечной непроходимости (I группа — 77, II — 26, III — 9 больных).

В отличие от результатов, полученных Г. П. Кокориным и М. В. Яковлевым [6, 17], у которых показатели II группы составляли 23—28%, наши данные составляют 8%, что обусловлено современным комплексом лечебных мероприятий, ранней госпитализацией и своевременным оперативным вмешательством. По нашему мнению, строгая индивидуализация типовых операций также способствует получению высоких количественных показателей отдаленных хороших и удовлетворительных результатов.

## Л И Т Е Р А Т У Р А

1. Дуриманов Г. Н. и Лактионов П. П. Вестник хирургии, 1967, 2, стр. 40.
2. Заводовский Н. В. Вестник хирургии, 1964, 10, стр. 112.
3. Зетель Ф. З. Труды Свердловского мед. ин-та, 1951, т. 5, стр. 177.
4. Истомин В. Е. Новый хирургический архив, 1937, т. 39, кн. 153—156, стр. 339.
5. Кенигсберг Э. Я. Канд. дисс. Ростов н/Д, 1949.
6. Кокорин Г. П. Труды института им. Склифасовского, кн. 1. М., 1957, стр. 157.
7. Минц В. М. Клиническая медицина, 1941, 19, 5, стр. 163.
8. Миронова В. И. Вестник хирургии, 1967, 2, стр. 40.
9. Некрасова Е. А. Труды Смоленского гос. мед. ин-та, т. 5, 1955, стр. 227.
10. Олешкевич И. Б. В кн.: Материалы научной сессии Витебского гос. мед. ин-та, 1958, стр. 48.
11. Парменов В. И. Вестник хирургии, 1940, 60, кн. 1—2, стр. 56.
12. Смоляк Л. Г. и Шматко П. И. Советская медицина, 1954, 6, стр. 6.
13. Страшинина Н. К. Вестник хирургии, 1958, 1, стр. 67.
14. Футорный Н. С. Советская медицина, 1961, 3, стр. 55.
15. Шицулин В. П. Сборник трудов Ижевского мед. ин-та, 1966, 25, 2, стр. 72.
16. Юрихин А. П. Хирургия, 1956, 6, стр. 54.
17. Яковлев М. В. Автореферат канд. дисс. Рязань, 1954.
18. Яришин А. Л. Вестник хирургии, 1950, 70, стр. 67.



Կ. Պ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԴԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՔՍՏԻԱԳՈՐԾՆԵՐԻ  
ՄՈՏ՝ ԼՆԵՒՆԱԿԱՆԻ ՄՆԵԴՕԳԵՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ  
(1924—1970 թթ. ընթացքում)

Մեր երկարամյա հետազոտությունների նպատակն է եղել պարզել հիդուլյան ընթացքի առանձնահատկությունները տեքստիլագործների մոտ՝ տնտեսուհիների համեմատությամբ, պարզելու, թե տեքստիլ արդյունաբերության մեջ գործող վնասակար գործոնները (վերացիան, բարձր ջերմությունը, օրգանական փոշին, աղմուկը, ֆիզիկական ծանր աշխատանքը) ինչպես են ազդում հղի կնոջ և պտղի առողջության վրա անտեսնալով ու պոստնատալ շրջանում:

Հետազոտությունները կատարելիս օգտվել ենք լննիական քաղաքի ծննդագնության հիմնարկների 1924—1970 թթ. արխիվային նյութերից և ընթացիկ դեպքերից: Հետազոտություններից պարզվել է, որ հիդուլյան տեքստիլագործների մոտ ընթանում է նորմալի համեմատությամբ այս կամ այն շեղումով: Բարձր տոկոս են կազմում հիդուլյան 1-ին և 2-րդ կեսի տոքսիկոզները, ինչպես նաև սեռական ու ոչ սեռական հիվանդությունները, հատկապես սիրտ-անոթային սխտեմի հիվանդություններն ու ստորին վերջույթների երակների վարիկոզ լայնացումները, որոնք, անշուշտ պայմանավորված են տեքստիլ արդյունաբերության մեջ գործող վնասակար գործոններով:

Մարդու առողջության պահպանումը մեր երկրում սովետական առողջապահական հիմնարկների կարևորագույն խնդիրն է: Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից լուրջ ուշադրություն է դարձվում աշխատավորների առողջության պահպանման գործին, արտադրության մեջ սանիտարա-հիգիենիկ պայմանների ու միկրոկլիմայի լավացմանը, պրոֆեսիոնալ հիվանդությունների կանխմանը և վերացմանը: Թեթև ու քիմիական արդյունաբերության արտադրության որոշ ճյուղերում լայնորեն օգտագործվում է կանանց աշխատանքը: Տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատողների գերակշռող մասը կանայք են: Հաշվի առնելով նրանց օրգանիզմի կենսաբանական առանձնահատկությունները և կատարած աշխատանքը արտադրության մեջ ու կենցաղում, պետք է ուսումնասիրել արտադրության պայմանները, միկրոկլիման, վնասակար գործոնները, պարզել վերջիններիս առաջացման աղբյուրները ու նրանց ազդեցությունը կնոջ առողջության վրա ընդհանրապես և սեռական ապարատի վրա մասնավորապես: Անհրաժեշտ է պարզել այդ վնասակար գործոնների ազդեցությունը հիդուլյան, ծննդաբերության ու հետծննդյան ընթացքի, պտղի ներարգանդային աճի ու զարգացման և ծնվելուց հետո նրա հետագա մտավոր ու ֆիզիկական զարգացման վրա, պարզել թե ինչ տոկոս են կազմում վիժումները, կանխածնությունը, մեռելածնությունը, տրավմատիզմը պտղի ու մոր մոտ, և վերջիններս ինչպես են անդրադառնում պտղի վրա և նրա հետագա կյանքի առաջին 10 տարիների ընթացքում: Մեր նպատակն է եղել պարզաբանել այս հարցերը և գտնել այդ վնասակար գործոնների վերացման ուղիները:



Ուսումնասիրության նյութը վերցվել է Լենինականի քաղաքային ծննդօգնության հիմնարկների 1924—1960 թթ. արխիվային նյութերից և վերջին 10 տարիների՝ 1960—1970 թթ. ընթացիկ դեպքերից, որպեսզի պարզ լինի, թե տեքստիլ կոմբինատի հիմնադրման ժամանակաշրջանից սկսած (1924 թ.) ինչպես են փոփոխվել արտադրության պրոցեսները, բանվորների քանակական ու որակական կազմը, արտադրության սանիտարա-հիգիենիկ պայմանները, և վերջինիս հետ կապված՝ հիվանդացությունը, մեռելածնությունը, տրավմատիզմը և մայրական ու մանկական մահացությունը: Այդ տարիներին կոմբինատ ընդունված և կոմբինատից հեռացած բանվորների ընդհանուր թիվը կազմել է 12200, որից 8590-ը (70%) եղել են կանայք:

1924—1970 թթ. ծննդօգնության հիմնարկներում գրանցվել է 324840 հղիության, ծննդաբերության և հիվանդության դեպք, որից 38600-ը (11,84%) եղել են զինեկոլոգիական հիվանդության, 286240-ը (88,16%) հղիության դեպքեր, դրանից 138600-ը (48,7%) եղել են ծննդաբերության դեպքեր, իսկ 147640-ը՝ (51,3%) հիվանդանոցային և արտահիվանդանոցային վիժումներ: Այս թվարկած դեպքերի մեջ տեքստիլագործներ եղել են 39100 հոգի (27,4%): Նրանցից 10800-ի մոտ (17,7%) եղել է ծննդաբերություն, 7700-ի մոտ (20%)՝ զինեկոլոգիական հիվանդություններ: 20600-ը (47%) կազմում են արտահիվանդանոցային և հիվանդանոցային վիժումների դեպքերը: Այստեղից երևում է, թե ինչպիսի մեծ տոկոս են կազմում վիժումները: Վիժումներից 30400-ը (43%) եղել են արհեստական, իսկ 40200-ը (57%)՝ արտահիվանդանոցային: Կրիմինալ վիժումները կազմում են 2800 դեպք (7%): Դրանց գերակշռող մասը կատարվել է մինչև 1956 թվականը, երբ արգելված են եղել արհեստական վիժումները: 40200 արտահիվանդանոցային վիժումներից հղիությունը պահպանված դուրս են գրվել ստացիոնարից 10050 հոգի (25%), իսկ 30150 դեպքում (43%) հղիությունն ընդհատվել է: Ինքնաբեր վիժումների ենթադրյալ պատճառները եղել են սեռական օրգանների թերզարգացումը, էքստրազենիտալ ու զենիտալ, ինֆեկցիոն և սոմատիկ հիվանդությունները, ռեզուս գործոնը, գրիպը և այլն: Սակայն ինքնաբեր վիժումների զգալի մասի պատճառը պարզ չի եղել: Շատ հավանական է, որ տեքստիլ արդյունաբերության վնասակար գործոնները (վիբրացիան, աղմուկը, բարձր ջերմությունը, հարաբերական բարձր խոնավությունը, փոշին, ֆիզիկական ծանր աշխատանքը) բացասաբար են անդրադառնում հղիության ընթացքի վրա, որն ավարտվում է ինքնաբեր վիժումով: Նման եզրակացության են հանգել շատ հեղինակներ [1, 2, 3, 5, 6, 7, 9 և ուրիշներ]:

Տեքստիլ արդյունաբերության ամեն մի բանվորուհուն միջին հաշվով ընկնում է 1:9,5 հղիություն, 1:1,2 ծննդաբերություն՝ 1:8,3 վիժում (հիվանդանոցային և արտահիվանդանոցային): Ինչպես տեսնում ենք, արտահիվանդանոցային և հիվանդանոցային վիժումները բավական բարձր տոկոս են կազմում գրականության տվյալների համեմատությամբ:

Ըստ Կ. Ն. Բրոննիկովայի տվյալների [3], քաղաքային փոխադրամիջոցների կոնդուկտորների մոտ ինքնաբեր վիժումները 4 անգամ շատ են տնտեսուհիների համեմատությամբ: Վերջինս պայմանավորված է փոխադրամիջոցների շարժումից առաջացած վիբրացիայով: Կարի ֆաբրիկայում աշխատող բանվորների մոտ ինքնաբեր վիժումներն ըստ Ն. Մ. Վավիլովայի [4] կազմում են 30,9%, ըստ Ա. Ա. Շեպերտինսկայայի [11])՝ 35,1%, տեքստի-



լազործների մոտ ըստ Ն. Մ. Վավիլովայի [4]՝ 12%, իսկ տնտեսուհիների մոտ՝ 6 տոկոս, ըստ Կ. Մ. Ֆիզոտնովի [10]՝ 13%, Մ. Ս. Մարտիկյանի [8]՝ 34,2%:

Ինքնուրույն վիժումներն ավելի հաճախ հանդիպում են առաջնածինների մոտ: Դրանք ավելի հաճախակի դիտվում են գործվածքային ֆաբրիկայում, այն էլ ջուլհակուհիների մոտ, որոնց մոտ ինքնուրույն վիժումները 3 անգամ շատ են մանող բանվորուհիների և 4 անգամ՝ տնտեսուհիների համեմատությամբ: Այս հանգամանքը պայմանավորված է արտադրության պրոցեսում առաջացող որոշ վնասակար գործոններով, որոնց ինտենսիվությունն ավելի արտահայտված է գործվածքային ֆաբրիկայում, որով և պայմանավորված է վիժումների բարձր տոկոսը այստեղ՝ մյուսների համեմատությամբ:

Մյուս կարևոր առանձնահատկությունը տեքստիլազործների մոտ դա տոքսիկոզների բարձր տոկոսն է հղիության ընթացքում (ստուգիչի համեմատությամբ): Հղիության 1-ին կեսի տոքսիկոզներ տեքստիլազործների մոտ 31400 հղիությունների դեպքում եղել է 24420-ի մոտ (30%), ստուգիչի 7,2%-ի համեմատությամբ: Հղիության 2-րդ կեսի տոքսիկոզներ եղել են 4884-ի մոտ (6%), ստուգիչի մոտ՝ 3,2%: Ինչպես հղիության 1-ին, այնպես էլ 2-րդ կեսի տոքսիկոզները գերակշռում են առաջնածինների, հատկապես մեծահասակ առաջնածինների մոտ, իսկ ըստ մասնագիտության՝ ջուլհակուհիների մոտ: Հղիության 2-րդ կեսի տոքսիկոզներից ծանր արտահայտված նեֆրոպատիաներ և էկլամպսիաներ ավելի հաճախ դիտվել են մինչև 1950 թվականը: Վերջին տարիներին դրանք զգալի պակասել են: Դա մի կողմից պայմանավորված է ազգաբնակչության տնտեսական, կուլտուրական, սոցիալական պայմանների լավացմամբ, մյուս կողմից՝ բուժական կանխարգելիչ միջոցների և արտադրության սանիտարահիգիենիկ պայմանների լավացմամբ:

Մյուս առանձնահատկությունը, որ նկատվում է տեքստիլազործների մոտ, դա սեռական օրգանների հիվանդությունների բարձր տոկոսն է: Էքստրագենիտալ հիվանդություններից գերակշռում են սիրտ-անոթային սիստեմի հիվանդությունները և ստորին ծայրանդամների երակների վարիկոզ լայնացումները, իսկ սեռական օրգանների հիվանդություններից՝ վուլվովագենիտները, արգանդի և հեշտոցի պատի անատոմիական փոփոխությունները, արտանկումներն ու արգանդի իջեցումները, որոնք, անշուշտ, արտադրության վնասակար գործոնների ազդեցության արդյունք են և բացասաբար են անդրադառնում հղիության, ծննդաբերության ու հետծննդյան շրջանների ընթացքի վրա:

Բարձր տոկոս են կազմում վաղաժամ ծննդաբերությունները, որի պատճառով հղիության միջին տևողությունը տեքստիլազործների մոտ կազմում է 38 շաբաթ, իսկ ստուգիչի մոտ՝ 41 շաբաթ: Այստեղից եզրակացնում ենք, որ նրանց մոտ վաղաժամ ծննդաբերությունները հաճախ են, իսկ ուշացած ծննդաբերությունները՝ սակավ: Ստուգիչի մոտ հակառակն է: Այս հանգամանքը ևս որոշ չափով պայմանավորված է արտադրության վնասակար գործոններով, որոնց ազդեցության տակ հղիությունը չի հասցվում մինչև վերջ և ընդհատվում է նրա տարբեր ժամկետներում: Նման եզրակացության են հանգել հետազոտող հեղինակներից շատերը [1, 2, 4, 5, 6, 7]:

Տեքստիլազործների մոտ բարձր տոկոս են կազմում ստորին ծայրանդամների, արտաքին սեռական օրգանների, ուղիղ աղիքի երակների վարիկոզ



լայնացումները՝ 35% (ստուգիչի մոտ 7%), որոնք հաճախ բարդանում են ֆլեբիտներով և տրոմբոֆլեբիտներով: Անշուշտ այս հանգամանքը ևս պայմանավորված է երկարատև կանգնած աշխատանքի դիրքով և մյուս վնասակար գործոններով, որոնք ստեղծում են կանգային երևույթներ ստորին ծայրանդամներում ու կոներում, առաջացնելով ֆունկցիոնալ և անատոմիական փոփոխություններ:

### Եզրակացություններ

1. Տեքստիլագործների մոտ հղիությունն ընթանում է նորմայի համեմատությամբ որոշ շեղումներով: Ենթադրվում է, որ այն պայմանավորված է արտադրական վնասակար գործոնների ազդեցությամբ:

2. Բարձր տոկոս են կազմում հղիության 1-ին և 2-րդ կեսի տոքսիկոզները, ինչպես նաև սեռական ու ոչ սեռական հիվանդությունները, հատկապես սիրտ-անոթային սիստեմի հիվանդությունները և ստորին ծայրանդամների վարիկոզ լայնացումը:

3. Բարձր տոկոս են կազմում արտահիվանդանոցային ու հիվանդանոցային ինքնաբեր վիժումները, ինչպես նաև վաղաժամ ծննդաբերությունները, որով և պայմանավորված է հղիության միջին տևողությունը տեքստիլագործների մոտ. այն կազմում է 38 շաբաթ (ստուգիչի մոտ 41 շաբաթ):

4. Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ արտադրության վնասակար գործոնները (վիբրացիան, աղմուկը, օդի հարաբերական խոնավությունը, բարձր ջերմությունը, կանգնած ֆիզիկական աշխատանքը) բացասաբար են անդրադառնում հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վրա:

Լենինականի քաղաքային ծննդատուն

Ստացված է 30/X—1972 թ.

К. П. ГУКАСЯН

### ОСОБЕННОСТИ ТЕЧЕНИЯ БЕРЕМЕННОСТИ У ТЕКСТИЛЬЩИЦ Г. ЛЕНИНАКАНА ПО ДАННЫМ РОДОВСПОМОГАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ (за 1924—1970 гг.)

#### Резюме

В работе изучены особенности течения беременности у текстильщиц г. Ленинакана по данным архивных и текущих материалов родовспомогательных учреждений (за 1924—1970 гг.). Одновременно изучена генитальная и экстрагенитальная заболеваемость у женщин, работающих на предприятиях текстильной промышленности.

Выяснилось, что процент заболеваемости и осложнений беременности из года в год уменьшался, что объясняется улучшением материально-бытовых условий текстильщиц. Несмотря на это, наблюдается несколько особенностей течения беременности у текстильщиц (по сравнению с контролем): высок процент токсикозов первой и второй половины,



экстрагенитальной и генитальной заболеваемости, самопроизвольных выкидышей и преждевременных родов. Из экстрагенитальных заболеваний преобладают сердечно-сосудистые заболевания и варикозные расширения вен нижних конечностей. Эти явления, по-видимому, обусловлены воздействием вредных факторов текстильной промышленности (вибрация, шум, высокая температура, влажность и запыленность воздуха и тяжелый физический труд с вынужденным положением тела).

## ЛИТЕРАТУРА

1. Андреева-Галанина Е. Ц. Гигиена и санитария, 1950, 10, стр. 44.
2. Андреева-Галанина Е. Ц. Вибрация и ее значение в гигиене труда. Л., 1956.
3. Бронникова К. Н., Шварева З. А., Ковтун З. П., Членова О. П. Труды VIII Всесоюзного съезда акушеров-гинекологов. Киев, 1928, стр. 330.
4. Вавилова Н. М. Труды VII Всесоюзного съезда гинекологов и акушеров. Л., 1927, стр. 613.
5. Грацианская Л. Н. Труды Ленинградского НИИ гигиены труда и профзаболеваний, т. 10. Л., 1947, стр. 64.
6. Лебедева А. Ф. Автореферат канд. дисс. Л., 1954.
7. Климец И. И. Труды ЛСГМИ, т. 44. Л., 1958, стр. 184.
8. Мартикян М. С. Автореферат канд. дисс. Ереван, 1962.
9. Петров-Маслаков М. А., Климец И. И. Производственная вибрация и специфические функции женского организма. Л., 1961.
10. Фигурнов К. М. Труды ВМАРККА им. С. М. Кирова, т. 3. М., 1935.
11. Шепетинская А. А. Гинекология и акушерство, 1929, 5—6, стр. 603.



УДК 616.411—002.951.21

Л. О. ЗАТИҚЯՆ

## РАЗРЫВ БОЛЬШОЙ ОДНОКАМЕРНОЙ ЭХИНОКОККОВОЙ КИСТЫ В СВОБОДНУЮ БРЮШНУЮ ПОЛОСТЬ С ТЯЖЕЛЫМ АНАФИЛАКТИЧЕСКИМ ШОКОМ\*

Среди острых заболеваний органов брюшной полости разрыв эхинококковой кисты селезенки в свободную брюшную полость с анафилактическим шоком является редкой и тяжелой патологией.

Описано успешное применение эпсилонаминокапроновой кислоты для выведения больной из анафилактического шока с последующей спленэктомией.

Селезенка по частоте поражения эхинококкозом занимает пятое место после печени (56,6%), легких (18,6%), мышц и мягких тканей (4,38%) и почек (2,24%) [2].

По сборной статистике И. Я. Дейнеки [1] в литературе к 1968 г. было опубликовано около 300 наблюдений эхинококка селезенки. Разрыв эхинококковой кисты отмечен у 40 из этих больных, причем у 16— в свободную брюшную полость.

В Армянской ССР, по данным Э. С. Мартикян [2], в году регистрируется 60—70 случаев эхинококкоза, из них селезенки 1—2.

В связи с редкостью заболевания и трудностями диагностики и лечения спонтанных разрывов кисты селезенки в свободную брюшную полость представляет интерес наше наблюдение.

Больная Г., 38 лет, инвалид II группы (миелоидный лейкоз, спленомагалия). Поступила в хирургическое отделение больницы г. Арарата 10/VI 1970 г. в 18 часов с жалобами на боли в животе, исчезновение существующей в последние 5—6 лет асимметрии брюшной стенки, головокружение, сыпь по всему телу с сильным зудом. Считает себя больной всего 6 часов. 10/VI 1970 г. в 12 часов во время приседания почувствовала будто «в животе что-то оборвалось», после чего возникли вышеуказанные явления.

Объективно: удовлетворительного питания, кожа и видимые слизистые бледны, температура 38,2°. Легкие и сердце без отклонений от нормы. Дыхание частое, поверхностное. Пульс 126 в минуту, слабого наполнения, артериальное давление 70/60. Язык сухой, живот равномерно участвует в акте дыхания, симметричен, при пальпации определяется слабая болезненность в левой подреберной области, симптом флюктуации положительный, в брюшной полости констатируется жидкость. При перкуссии отмечается равномерное притупление перкуторного звука в отлогих местах. По всему телу имеется аллергическая папулезная сыпь.

Срочно произведенные исследования выявили следующие данные: лейкоцитоз—6800, гемоглобин—93%, время свертывания по Ли Уайту—12 мин., количество фибри-

\* Доложено на заседании хирургического общества Армянской ССР, Ереван, 23/II 1971 г.



ногена по Рутберг в модификации Котовщиковой—250 мг%, фибринолитическая активность по Коваржику—30 мин.

Нами высказано предположение о возможности разрыва эхинококкового пузыря с нарастающим анафилактическим шоком.

Больной назначено внутривенное вливание полиглюкина, внутривенно введен 10%-ный раствор хлористого кальция и 1,0 кордиамина подкожно. Через час общее состояние больной ухудшилось: пульс 114 в минуту, слабого наполнения, артериальное давление 60/45, аллергическая сыпь увеличилась, сознание стало заторможенным. В 19 часов 40 мин. внутривенно медленно введен 30%-ный раствор эпсилонаминокапроновой кислоты—20 мл. Через 20 мин. общее состояние больной стало улучшаться: пульс 96 в минуту, удовлетворительного наполнения, артериальное давление—110/80, папулезная сыпь по всему телу уменьшилась, зуд в области оставшихся папул прекратился, сознание больной восстановилось.

Повторные анализы после введения эпсилонаминокапроновой кислоты дали следующие результаты свертывания системы крови: Ли Уайт—6 мин., количество фибриногена 275 мг%, фибринолитическая активность 90 минут.

10/VI 1970 г. в 21 час больная оперирована. Масочный эфирный наркоз. Разрез параллельно левой реберной дуге длиной 16 см. После вскрытия брюшной полости медленно удалено 13 л серозной почти без примеси крови жидкости.

При ревизии брюшной полости обнаружено, что селезенка имеет размеры 15×11×9 см и занята огромным эхинококковым пузырем. Верхний полюс селезенки плотно спаян с диафрагмой мощными спайками. Рассечение спаек и мобилизация селезенки в области диафрагмы не сопровождалась капиллярным кровотечением. Произведена типичная спленэктомия. После туалета брюшной полости рана брюшной стенки зашита наглухо. Во время операции повторно введено вместе с кровезаменителями внутривенно 50 мл 5%-ной эпсилонаминокапроновой кислоты. Послеоперационное течение гладкое. Больная выписана на 19-й день. Через 7 месяцев самочувствие хорошее, жалоб не имеет.

Наше наблюдение дает основание прийти к следующему заключению. В случаях спонтанного или травматического разрыва эхинококкового пузыря, сопровождающегося анафилактическим шоком, целесообразно срочно ввести внутривенно эпсилонаминокапроновую кислоту по двум причинам: во-первых, эпсилонаминокапроновая кислота является хорошим антиаллергическим средством (снижает фибринолитическую активность крови, повышенную при аллергических состояниях).

Во-вторых, эпсилонаминокапроновая кислота, уменьшая фибринолитическую активность крови, приводит к норме гипокоагуляцию последней, что очень важно при операциях на паренхиматозных органах с мощными спайками для профилактики капиллярного кровотечения.

Аракатское раймедобъединение

Поступила 12/IV 1972 г

## 2. 1. ՁԱՏԻՎՅԱԼ

ՄԻԱԿԱՄԵՐԱՆԻ ԷԽԻՆՈԿՈԿԱՅԻՆ ՄԵՍ ԲՇՏԻ ՊԱՅԹԵԼԸ ՈՐՈՎԱՅՆԻ  
ԽՈՌՈՂԻ ՄԵՋ՝ ԵԱՆՐ ԱՆԱՖԻԼԱԿՏԻԿ ՇՈԿԻ ԸՆԹԱՅՔՈՎ

Ա մ փ ո փ ո լ մ

Արդումինալ վիրաբուժության սուր հիվանդությունների մեջ փայծաղի էխինոկոկոզի բշտի պայթումը որովայնային խոռոչի մեջ (անաֆիլակտիկ շոկային ընթացքով) հանդիսանում է հազվագյուտ ծանր պայթուղի:



Մեր կողմից նկարագրված դեպքը հաշոդ է ընթացել: Հիվանդին անաֆիլակտիկ շոկի վիճակից հանելու նպատակով ներերակային դանդաղ ներարկվել է 30%-անոց 20 մլ էպսիլոնամինակապրոնային թթու: Հետագայում կատարվել է սպինեկտոմիա: Անհրաժեշտ է նշել էպսիլոնամինակապրոնային թթվի դրական ազդեցությունը վիրահատման ընթացքի վրա՝ ստոծանու կպումներից փայծաղի մոբիլիզացիայի ժամանակ (տեղի չի ունեցել մազանոթային արյունահոսություն): Դա բացատրվում է էպսիլոնամինակապրոնային թթվի արտահայտված անտիֆիբրինոլիտիկ ազդեցությամբ, որը նորմալացնում է արյան հիպոկոագուլացիան: Վերջինս արտահայտված է լինում ալերգիկ վիճակի ժամանակ:

## Л И Т Е Р А Т У Р А

1. Дейнека И. Я. Эхинококкоз человека. М., 1968.
2. Мартикян Э. С. Автореферат докт. дисс. Ереван, 1964.



УДК 616—006.432+616.155.14

А. А. САФАРЯН, А. И. ИСААКЯН

О СЛУЧАЕ ПАРЦИАЛЬНОЙ (КРАСНОКЛЕТОЧНОЙ)  
ГИПОПЛАЗИИ КОСТНОГО МОЗГА—ЭРИТРОБЛАСТОФТИЗЕ

Эритробластофтиз является одним из вариантов гипопластической анемии с избирательным поражением эритроидного ростка при сохранности миелоидного и мегакариоцитарного ростка.

Советскими авторами описано 7 случаев эритробластофтиза [1—4]. В Армянской ССР случай эритробластофтиза впервые диагностирован в гематологической лаборатории Института переливания крови.

Приводим наше наблюдение.

Больной В., 16 лет, поступил в стационар института 22/III 1969 г. Жалобы на общую слабость, головные боли, головокружение. Считает себя больным с 8/III 1969 г.

До поступления в стационар больной В. лежал в инфекционной больнице с диагнозом: болезнь Боткина. Основанием послужила субиктеричность слизистых и кожных покровов. Диагноз не подтвердился. После выписки состояние больного ухудшилось. Врач поликлиники направил больного в туберкулезную больницу с диагнозом: туберкулезный спондилит. Диагноз не подтвердился, и после консультации с гематологом больной был направлен в стационар. Состояние больного крайне тяжелое, кожные покровы и слизистые субиктеричны. Язык обложен. Печень и селезенка не прощупываются. Кровяное давление 100—50, пульс слабого наполнения, 120 в минуту. Со стороны других органов изменений нет. Предварительный диагноз— аутоиммунная гемолитическая анемия.

Анализ крови и костного мозга от 23/III 1969 г.: гемоглобин—3,7 г%, эритроциты—870000 в 1 мм<sup>3</sup>, цв. пок.—1,0, лейкоциты—4400 в 1 мм<sup>3</sup>, РОЭ—75 мм в час по Панченко, ретикулоциты—0, тромбоциты 46100 в 1 мм<sup>3</sup>—53%. Осмотическая резистентность эритроцитов—норма. Эритроидный росток костного мозга резко сужен—0,5% эритробластов. Мегакариоцитарный и миелобластический росток сохранены. Реакция Кумбса отрицательная.

Диагноз: эритробластофтиз. Наступила анемическая кома.

Лечение: переливание эритроцитарной массы, кортикостероидная терапия. У больного имело место аллергическое состояние медикаментозного происхождения, т. к. он принял большое количество сульфамидных препаратов, что привело в конечном итоге к истощению костномозгового «эритрона».

Анализ крови и костного мозга перед выпиской 3/VI 1969 г.: гемоглобин—10,5 г%, эритроциты—3240000 в 1 мм<sup>3</sup>, цв. пок.—0,9, лейкоциты—8000 в 1 мм<sup>3</sup>, РОЭ—8 мм, эритроидный росток—20,5%. Фигуры митоза эритроидного ряда—3:400.

Институт переливания крови  
МЗ Арм. ССР

Поступила 7/V 1972 г.



Ա. Ա. ՄԱՅԱՐՅԱՆ, Ա. Ի. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՈՍԿԱՐԱԾՈՒԾԻ ՊԱՐՑԻԱԼ (ԿԱՐՄՐԱԲՋԻԶ) ՀԻՊՈՊԼԱՋԻԱՅԻ  
ԷՐԻԹՐՈՐՈԱՍՏՈՖԻԶ ՄԻ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

Ա մ փ ո փ ո լ մ

Հոդվածում նկարագրվում է հազվադեպ հիվանդություն՝ էրիթրոբլաստոֆտիզ դեռատի Ս. Վ.-ի մոտ: Այս հիվանդության ժամանակ պահպանվում են ոսկրածուծի միելոիդ և մեգալարիոցիտային բողբերը: էրիթրոիդ բողբը խիստ նեղանում է և ի վերջո հանգեցնում անեմիկ կոմայի:

Բուժումը. էրիթրոցիտային զանգվածի փոխներարկում և կորտիկոստերոիդներ:

# ЛИТЕРАТУРА

1. Кассирский А. И., Алексеев Г. А. Клиническая гематология. М., 1970.
2. Тушинская М. Д., Ярошевский А. Я. Болезни системы крови. М., 1959.
3. Файнштейн Ф. Э. Апластические и гипопластические анемии. М., 1965.
4. Фридман Л. М., Семенская Е. М., Мехуэла Т. А., Инасаридзе Е. В. Тезисы докладов XVIII научной сессии Института гематологии и переливания крови Груз. ССР, посвященной 800-летию великого груз. поэта Шота Руставели. Тбилиси, 1966, стр. 60.



# Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մխիթարյան Վ. Գ., Մեծյումայն Լ. Մ. Ուտեկանինազայի և Հիստորիազայի ակտիվությունը արյան մեջ ու լյարդում քլորոպրենի երկարատև թունավորումների և պերօքսիդացված չհագեցած ճարպաթթուների ազդեցության տակ . . . . .	3
Սեդրիասյան Է. Ս., Գրիգորյան Լ. Գ. Ուղեղիկի գրգռման ազդեցությունը արյան մի շարք միկրոէլեմենտների բաղադրության վրա . . . . .	12
Մկրտչյան Վ. Ա., Սևանց Լ. Գ., Ջաֆարյան Ս. Ա., Բուդաղյան Լ. Գ. Միսկարյան Լ. Պ. Դանդաղեցված ձկնի գերզայնության ճնշումը ԱՄ-ի օդնության մեջ և նրա հայտնաբերումը բլիշների տեղափոխման ռեակցիաների միջոցով . . . . .	18
Մինասյան Գ. Մ., Հովհաննիսյան Ա. Ս. Ռենտգենյան ճառագայթների ազդեցությունը երկվամենների գործունեության որոշ կողմերի վրա և Հաղորդում Դ. Ազդեցությունը երկվամենների ֆունկցիոնալ վիճակի վրա . . . . .	24
Աղախանյան Ա. Գ., Ալավերդյան Ա. Գ., Փառնոսյան Ս. Գ. Քլորոպրենի ազդեցությունը հակամարմինների առաջացման ընթացքի վրա առնետների մոտ . . . . .	28
Ենգիբարյան Ա. Ա. Մանրացված մկանային աուտոտրանսպլանտատի դերը նոր մկանի ձևավորման պրոցեսում . . . . .	31
Թորոսյան Ա. Ա., Մկրտչյան Լ. Մ. Ստամոքսի լորձաթաղանթի պաթոմորֆոլոգիան խրոնիկական գաստրիտով հիվանդների մոտ «Դիլիշան» հանքային ջրով բուժումից առաջ և հետո . . . . .	35
Շահնազյան Ա. Ա. Ռեկտոտոմանոսկոպիական պատկերը ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտի ժամանակ . . . . .	41
Կարապետյան Ռ. Մ. Լեյշմանիոզների կանխագուշակման և կանխարգելման գիտական հիմունքները Հայկական ՍՍՀ-ում . . . . .	46
Մարգարյան Գ. Մ. Նոր հայրենական պրեսպարատ «Բուլմանիդ»-ի կլինիկական պրակտիկայում կիրառման փորձից . . . . .	53
Հակոբյան Ա. Բ. Լյարդի ֆունկցիոնալ փոփոխությունները խրոնիկական պիեռնոֆրիտներով տառապող հիվանդների մոտ . . . . .	57
Ինճիկյան Օ. Հ. Լեյկոցիտների ֆերմենտատիվ ակտիվությունը վաղ հասակի երեխաների մոտ թոքաբորբերի ժամանակ . . . . .	61
Խուդավերդյան Վ. Գ. Կոկորդի վիրահատումներից հետո ուռուցքների կրկնման պատճառների, հաճախականության և նրանց առաջացման ժամանակի հարցերի ուսումնասիրությունը . . . . .	65
Արանասյան Ս. Ս., Հայրապետյան Մ. Խ., Խզարյան Ն. Ա. Գլխի և պարանոցի շարորակ ուռուցքների ներզարկերակային ռեզիոնար քիմիոթերապիայի հարցի շուրջը . . . . .	70
Շատախյան Մ. Պ. Աղիքների սուր անանցանելիություններից վիրահատված հիվանդների հեռավոր արդյունքների մասին . . . . .	76
Ղուկասյան Կ. Պ. Հղիության ընթացքի առանձնահատկությունները տեքստիլագործների մոտ՝ Լենինականի ծննդօգնության հիմնարկների տվյալներով (1924—1970 թթ. ընթացքում) . . . . .	82
Ջատիկյան Հ. Լ. Միակամերային էլիտրոկոկային մեծ բջիտի պայթյունը որովայնի խոռոչի մեջ՝ ծանր անաֆիլակտիկ շոկի ընթացքով . . . . .	86
Սաֆարյան Ա. Ա. Իսախանյան Ա. Ի. Ոսկրածուծի պարզեալ (կարմրաբջիշ) հիպովարդիայի՝ էրիթրոբլաստոֆտիզ, մի դեպքի մասին . . . . .	88



## СО Д Е Р Ж А Н И Е

<i>Мхитарян В. Г. Межлумян Л. М.</i> Урокаиная и гистидазная активность в крови и печени при хроническом хлоропреновом отравлении и под влиянием пероксидированных ненасыщенных жирных кислот . . . . .	3
<i>Андрисян Э. С., Григорян Л. Г.</i> Влияние раздражения мозжечка на содержание ряда микроэлементов в крови . . . . .	12
<i>Мкртчян В. А., Севунц Л. Г., Захарян С. А., Будагян Л. Г., Мискарян Л. П.</i> Индукция и подавление гиперчувствительности замедленного типа при помощи АЛС и выявление ее клеточным переносом . . . . .	18
<i>Минасян Г. М., Оганесян А. С.</i> Действие рентгеновского облучения на некоторые стороны деятельности почек. Влияние на функциональное состояние почек (сообщение I) . . . . .	24
<i>Агаханян А. Г., Аллавердян А. Г., Паносян С. Г.</i> Влияние хлоропrena на анти-телообразование у крыс . . . . .	28
<i>Енгибарян А. А.</i> Роль измельченного скелетно-мышечного аутоотрансплантата в ходе формирования новой мышечной ткани . . . . .	31
<i>Торосян А. А., Мкртчян Л. Н.</i> Патоморфология слизистой оболочки желудка у больных хроническим гастритом до и после лечения минеральной водой «Дилижан» . . . . .	35
<i>Шахбазян А. А.</i> Ректороманоскопическая картина при неспецифическом язвенном колите . . . . .	41
<i>Карапетян Р. М.</i> К оценке эпидемиологической значимости отдельных видов флеботомусов в Армянской ССР на основании сравнительных экологических данных . . . . .	46
<i>Маркарян Д. С.</i> Из опыта применения нового отечественного препарата буванид в клинической практике . . . . .	53
<i>Акопян А. Б.</i> Функциональные нарушения печени у больных хроническим пиелонефритом . . . . .	57
<i>Инджибян О. О.</i> Ферментативная активность лейкоцитов при пневмониях у детей раннего возраста . . . . .	61
<i>Худавердян В. Г.</i> Изучение основных причин, частоты и сроков появления рецидивов рака гортани после хирургического лечения . . . . .	65
<i>Атанасян С. С., Айрапетян М. Х., Хзарчян Е. А.</i> О лечении злокачественных опухолей языка и губы регионарной внутриартериальной химиотерапией . . . . .	70
<i>Шатахян М. П.</i> Об отдаленных результатах у больных, оперированных по поводу острой кишечной непроходимости . . . . .	76
<i>Гуксян К. П.</i> Особенности течения беременности у текстильщиц г. Ленинакана по данным родовспомогательных учреждений (за 1924—1970 гг.) . . . . .	82
<i>Затикян Л. О.</i> Разрыв большой однокамерной эхинококковой кисты в свободную брюшную полость с тяжелым анафилактическим шоком . . . . .	86
<i>Сафарян А. А., Исаакян А. И.</i> О случае парциальной (красноклеточной) гипоплазии костного мозга—эритробластофтизе . . . . .	88